2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԹԵԺ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՀԱՋԱՆԳԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2020թ. ՔՏՀԱ տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է *476* բողոք: Ստացված բողոքների ընդհանուր քանակի 55,55%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին: Ըստ բնագավառների պատկերն այսպիսին է:

Տրանսպորտային անվտանգության բնագավառ. հասցեագրվել է 77 *(16,2%)* դիմում-բողոք: Հանրությունից ստացված հիմնավոր 58 գրություններից և դիմում-բողոքներից լուծում են ստացել՝ 47-ը (81%), իսկ 16 բողոք (20,8%) հիմնավոր չի եղել: Ստացված բողոքներից 55-ը (71,4%) ներկայացվել է թեժ գծով:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառ. ստացվել է 25 *(5,2%)* դիմում-բողոք և գրություն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից:

Հանրությունից ստացված 25 դիմում-բողոքներից 22-ը (88%) հիմնավոր են, 3-ը (12%)՝ ոչ հիմնավոր:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ. ստացվել է 41 (8,6%)՝ դիմում-բողոք: Քաղաքացիներից, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ստացվել է 41 դիմում-բողոք, որից 26-ը Երևանում գտնվող օբյեկտների վերաբերյալ, 4-ը՝ Արագածոտնի, 3-ական՝ Արմավիրի և Լոռու մարզերում և մեկական՝ Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերից:

Բողոքներից հիմնավոր են 26-ը *(*63,4%*)*, հիմնավոր չեն՝ 11-ը: Հիմնավոր բողոքներից 7-ը (27%) լուծում է ստացել: Հանրությունից ստացված 2 բողոքի հիման վրա, որից մեկը ստացվել է թեժ գծով, իրականացվել են ստուգումներ:

Քաղաքաշինության բնագավառ. ստացվել է *314* դիմում-բողոք *(66%)*: Հիմնավոր է եղել 252 դիմում, որոնք ստացել են համապատասխան լուծում, ոչ հիմնավոր են եղել 49-ը:

Բողոքներից 72-ը (23%) ստացվել է թեժ գծով:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառ. հասցեագրվել է 19 դիմում-բողոք,

որոնցից հիմնավոր են 9-ը, ոչ հիմնավոր՝ 10-ը, 6 բողոքի հիման վրա կատարվել են ստուգումներ։ Բոլոր հիմնավոր բողոքները լուծում են ստացել։

Թեժ գծով ստացվել է 1 բողոք։